

† ՄԱՀԳՈՅԺ

1. ՆԻԼՍ ՖԻՆԶԵՆ

Անցեալ սեպտեմբերին Կոպէնհագէնում վախճանուեց պրոֆէսոր Նիլս Ֆինզէնը, որ մի շատ կարեւոր զիւտ է արել բժշկականութեան մէջ, ինչպէս արդէն մենք իւր ժամանակին էլ ասել ենք թերթիս էջերում: Նա գտաւ լուսաբուժութեան եղանակը:

Ֆինզէնը իւր ուսումը ստացել է Դանիսյում և իննսնական թուականներին նա հիմնեց Կոպէնհագէնում բժշկական մի հաստատութիւն — «Medyzynste—Lys-Institut»:

Ի նկատի ունենալով, որ արևի լոյսը սպանում է մանրէները և մարդկային հիւսուածքների վերայ ազդելու յատկութիւն ունի, նա սկսեց փորձեր անել՝ կաշուի հիւանդութիւնները բժշկելու ելեբարական լուսով: Եւ այդպիսով իւր բազմադիմի փորձերից յետոյ նա գտաւ, թէ ինչ տեսակ լոյսի ճառագայթներ բուժիչ ընդունակութիւն ունին և ինչ եղանակով պէտք է նոցա գործադրել. և պատրաստեց ֆինզէնեան կոշուած գործիքը, որ հասցրեց վերին աստիճանի կատարելագործութեան: Մեր հանդիսի ընթերցողները գիտեն, որ ֆինզէնեան գործիքը յաջողութեամբ օգնում է մանաւանդ լուպուսի դէմ, այն է կաշուի տուբերկուլեօզեան հիւանդութեան ղէպքում, որ սովորաբար այլանդակում է մարդու կերպարանքը:

Նա մեծ ժողովրդականութիւն ստացաւ գիտնական աշխարհում, նորա մօտ ամեն կողմից գալիս էին բազմաթիւ հիւանդներ, որոնց օգնում էր ամեն կերպ: Վերջին տարիներս նա օտացաւ Նօրբլեան մրցանակը — 80,000 ռուբլի, որից 10,000-ը նա գործ դրեց իւր հիւանդների վերայ:

Մարդկութեան այս մեծ բարեկամը մեռաւ անժամանակ՝ 44 տարեկան հասակում սրտի ծանր հիւանդութիւնից:

2. ՅԱՅՈՎԱԲ ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Հոկտեմբերի 20-ին Թիֆլիսում վախճանուեցաւ 56 տա-

րեկան հասակում երգուեալ հաւատարմատար Յակովբ Տէր Յովհաննիսեանը, թողնելով 6 մանր երեխաներ անապահով վիճակում:

Հանգուցեալը ութսունական թուականների հայ աչքի ընկնող գործիչներից մէկն էր, Վարել է բաւական շատ պաշտօններ դպրոցական և հոգևոր ասպարիզում.— եղել է ուսուցիչ և տեսուչ Գայիանեան ուսումնարանում— ձրիաբար, ուսուցիչ և մի շըրջանի հոգաբարձու Ներսիսեան Իպրոցում, թեմական վերատեսուչ Վրաստանի վիճակի հայ ծխական դպրոցների և վերջապէս երկու տարի հրատարակել է «Մանկավարժական թերթ» ամսագիրը: Քանի մի տարի վարում էր նաև Թիֆլիսի Հայոց թեմական Առևտրի իրաւաբանի պաշտօնը: Իննսնական թուականներից Հանգուցեալը թողեց դպրոցական ծառայութիւնը և նուիրուեց իւր մասնագիտութեան— փաստաբանութեան:

Յակովբ Տէր Յովհաննիսեանը յայտնի էր իւր սիրալիր բնաւորութեամբ և իբրև հասարակական գործիչ— իւր մաքուր և անխաղախ դործունէութեամբ:

3. ՄՏՆՓԱՆ ԶԵԼԻՆՍԿԻ

Հոկտեմբերի 22-ին երկարատև հիւանդութիւնից յետոյ Թիֆլիսում վախճանուել է յայտնի բանագէտ Ստեփան Զելինսկին, որ իւր ծագումն ունէր և լաւ գիտէր հայերէն: Հանգուցեալը ծանօթ էր մեզ մօտ իբրև կովկասագէտ և իբրև անդրկովկասեան գիւղական կեանքի լաւագոյն ուսումնասիրող:

Զելինսկին թողել է բաւական գրաւոր գործեր, նա աշխատակցել է «Մշակ» և «Արձագանք» լրագիրներին, հրատարակել է հայերէն լեզուով մի քանի գիւղատնտեսական գրքոյկներ և Ալեքսանդրօպօլի ու Զանգեզուրի դաւառների ուսումնասիրութիւններ: Թողել է նաև մի քանի անտիպ աշխատութիւններ: Մենք կարծում ենք հանգուցեալը պիտի թողած լինի նաև մի աշխատութիւն մեր Յովհան Մանդակունի և Գրիգոր Նարեկացի մատենագիրների մասին, որովհետև հանգուցեալը մի քանի տարի առաջ մեզ ուղղել էր մանրամասն հարցեր այդ մատենագիրների գրութեան զանազան կէտերի վերաբերեալ, որոնց մանրամասն պատասխանը հաղորդեցինք իրան:

Հանգուցեալը մասնակցում էր և հայ հասարակական գործերին. մի ժամանակ նա վարեց Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան փոխ-նախագահի պաշտօնը և մասնակցեց Մորգովցեպի կատարած վերելքին Արարատ լեռան վերայ, որտեղից և իսկապէս սկիզբն առաւ նորա այն երկարատև հիւանդութիւնը, որ վերջիվերջոյ գերեզման տարաւ այդ համակրելի գործիչին:

ՀԱՅ